

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ**

N 17-67  
06.10.2017

**ՀՀ արդարադատության նախարար  
Պարոն Դավիթ Հարությունյանին**

**ԸՆԹԱՑԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**


Հարգելի պարոն Հարությունյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդների խմբի անդամները 05.10.2017թ. այցելել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ժամանակ ցանկացել են հանդիպել կալանավորված անձ՝ սակայն հիմնարկի ղեկավարությունը չի թույլատրել հանդիպել նշված անձի հետ՝ պատճառաբանելով, որ քննիչի կողմից առկա է տեսակցությունների արգելք: Նշենք սակայն, որ օրեր առաջ՝ 27.09.2017թ., Դիտորդների խմբի անդամները մեկ անգամ արդեն հանդիպել են: Հանդիպման ժամանակ ձախ աչքն ամբողջությամբ կապտուկի մեջ էր, իր խոսքով կապտուկն առաջացել էր ընկնելու հետևանքով: Սակայն հիմնովին կասկածներ կան առ այն, որ աչքի կապտուկը ոչ թե ընկնելու հետևանք էր, այլ բռնության, ընկնելու հետևանքով նման վնասվածքի առկայության հավանականությունը շատ ցածր է: Բացի այդ, դիտորդների գնահատմամբ, գտնվում էր հոգեբանորեն ընկճված և լարված վիճակում: Նշված հանգամանքները խմբի անդամների մոտ համոզմունք են ձևավորել, որ կյանքի և առողջության համար առկա է լուրջ սպառնալիք: Խմբի անդամները փորձել են կրկին հանդիպել նշված անձին, սակայն նրանց աշխատանքը խոչընդոտվել է: Ներկա դրությամբ խմբի անդամները անհանգստացած են կյանքի և առողջության համար, սակայն չեն կարողանում նրան հանդիպել:

Որպես առաջնային խնդիր առաջարկում ենք քայլեր ձեռնարկել անվտանգությունն ապահովելու և նրա նկատմամբ ուժեղացված հսկողություն սահմանելու ուղղությամբ (քննարկել նաև նրան առավել անվտանգ խուց տեղափոխելու հարցը):

Բացի այդ, Դիտորդների խումբը բազմիցս անդրադարձել է վերջին մեկ տարվա ընթացքում խմբի աշխատանքների խոչընդոտումներին՝ կապված քննիչների կողմից տեսակցությունների արգելքի հետ, որի վերաբերյալ ՀՀ Արդարադատության նախարարությանը կրկին առաջարկում ենք, քննարկել նախաքննության մարմինների կողմից տեսակցությունների արգելքի վերաբերելիությունը հասարակական Դիտորդների խմբի նկատմամբ՝ առաջնորդվելով նախկինում գոյություն ունեցող իրավակիրառ պրակտիկայով:

**Հարգանքով՝**

**ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում  
և մարմիններում հասարակական վերահսկողություն  
իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ**  **Արայիկ Զայան**